ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Federal Department of Foreign Affairs FDFA
Swiss Agency for Development and Cooperation SDC

SDA Strategic Development Agency
Strategies for Development

ԿԱՂԵՍԵ՛Ք ԲՐՈՒՑԵԼՈՉԸ ՍԻՔԱՍԻՆ

հուշաթերթ ֆերմերի համար

Ի՞ՆՉ Է ԲՐՈՒՑԵԼՈԶԸ

Բրուցելոզը մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդություն է, որը սովորաբար ուղեկցվում է փոփոխական տենդով, թուլությամբ, մկանացավերով, հոդացավերով, ախորժակի բացակայությամբ և քրտնարտադրությամբ:
Մարդկանց մոտ հիվանդության գաղտնի շրջանը տևում է երկու կամ երեք շաբաթ

Ո՞Վ Է ԿԱՐՈՂ ՎԱՐԱԿՎԵԼ ԲՐՈՒՑԵԼՈԶՈՎ

Բրուցելոզով կարող են հիվանդանալ ինչպես բոլոր տարիքի և սեռի մարդիկ, այնպես էլ գյուղատնտեսական, տնային (ընտանի) և վայրի կենդանիները: Վարակվելու ռիսկի ենթակա են հատկապես այն անձիք, ովքեր շփվում են կենդանիների հետ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

- ✓ **Փոփոխական ջերմություն**
- ✓ **առատ քրտնարտադրություն, հատկապես՝ գիշերային ժամերին**
- ✓ **մկանների, հոդերի կամ մեջքի ցավեր**
- ✓ **թուլություն և հոգնածություն**
- ✓ **ախորժակի բացակայություն**

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԲՐՈՒՑԵԼՈԶԻՑ

Պահպանեք անձնական հիգիենան և սնվեք առողջ

- ✓ Կենդանիների հետ շփվելուց հետո ***լվացե՛ք ձեռքերը***
- ✓ Աշխատելիս մշտապես ***կրե՛ք ձեռնոցներ,*** հատկապես, եթե առնչվելու եք վիժված պտղի, պտղաթաղանթների կամ ծննդաբերող կենդանու հետ
- ✓ Սեփական արտադրության ***կաթը օգտագործե՛ք եռացնելուց հետո***
- ✓ ***Լավ եփե՛ք միսը,*** քանի որ բրուցելոզի հարուցիչները ոչնչանում են միայն լավ եփելուց հետո

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՎԱՐԱԿՎԵԼ ԲՐՈՒՑԵԼՈԶՈՎ

Բրուցելոզի վարակի հիմնական աղբյուրը հիվանդ կենդանիներն են: Մարդը վարակվում է՝

- ✓ ***Ջերմային մշակման չենթարկված կաթ, կաթնամթերք (հատկապես՝ պանիր) և լավ չեփած մսեղիք օգտագործելու դեպքում***
- ✓ ***Չպահպանելով անձնական հիգիենան կենդանիներին խնամելիս***
- ✓ ***Կենդանիների հետ շփվելիս երբ ձեռքերի վրա կան բաց վերքեր***

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՈՏ

- ✓ ***Վիժումներ սովորաբար հղիության երկրորդ կեսում՝*** հաճախ վիժմանը հետևող հղիությունները նորմալ են ընթանում, սակայն կենդանին ամբողջ ընթացքում կաթի, մեզի, պտղաջրերի միջոցով կարող է աղտոտել շրջակա միջավայրը
- ✓ ***Մատկած պտուղ.*** Կարող են ծնվել նաև թույլ ձագեր, որոնք շուտ անկում են
- ✓ ***Կաթնարտադրության անկում՝*** հիվանդությունը հատկապես բնորոշ է բարձր մթերատվությամբ կենդանիներին

ՄԻ՛ ԳՆԵՔ ԿԱԹ, ԿԱԹՆԱՄԹԵՐՔ և ՄՍԵՂԻՔ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ

ՊԱՀՊԱՆԵՆՔ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՆ ԵՎ ՍՆՎԵՆՔ ԱՌՈՂՋ

ԸՆԴԱՌԱՋԵ՛Ք ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Առողջ պահե՛ք Ձեր կենդանիներին

✓ Անասնաբույժի օգնությամբ հնարավորինս շուտ ***սանիտարական սպանդի ենթարկե՛ք*** հայտնաբերված հիվանդ կենդանիներին և ***ախտահանե՛ք տարածքը***

✓ Կենդանիներ գնելիս անպայման ***դիմե՛ք Ձեր անասնաբույժի օգնությանը***

✓ Այլ հոտերից/վայրերից կենդանիներ բերելիս դրանք ***առանձին պահե՛ք*** մինչև անասնաբույժի կողմից հաստատվի հիվանդության բացակայությունը

✓ Տնտեսությունում մեկ հիվանդ կենդանի հայտնաբերելուց և սպանդի ենթարկելուց հետո անասնաբույժների հետ համատեղ ***ապահովե՛ք*** կենդանիների արյան նմուշառումները

✓ Վիժումների վերաբերյալ անպայման ***տեղեկացրե՛ք անասնաբույժին***

✓ ***Հայտնե՛ք*** Ձեր կենդանիների ստույգ քանակը, որպեսզի դրանք դուրս չմնան պետության կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումներից

✓ Ծնի ժամանակ ***առանձնացրե՛ք*** կենդանիներին, որից հետո անասնաբույժի օգնությամբ ***ախտահանե՛ք տարածքը***

Մարդկանց շրջանում հիվանդության հետ կապված հարցերի դեպքում զանգահարել՝ Առողջապահության նախարարության

ԹԵԺ ԳԻԾ՝ 52-88-72

Կենդանիների և սննդի հետ կապված խնդիրների դեպքում զանգահարել՝ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության

ԹԵԺ ԳԻԾ՝ 20-60-40

ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Federal Department of Foreign Affairs FDFA
Swiss Agency for Development and Cooperation SDC

SDA Strategic Development Agency
Strategies for Development